



հայաստան համահայկական հիմնադրամ
The Armenia Fund



ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
Rural Development Program

ԱՄՍԱԹԻՎ.
ՈՒՄ ԿՈՂՄԻՑ.

ԽՈՐԱԳԻՐ.

Փետրվարի 15, 2008 թ.
Գյուղական զարգացման ծրագրի
գրասենյակ
«Հայաստան» համահայկական հիմնադրամի
Գյուղական զարգացման ծրագրի շաբաթական
գեկույց

Սուրբ Վալենթինի եւ Նախագահական ընտրությունների միջեւ մենք հայտնվել էինք երկու մեծ ուժերի՝ սիրո եւ քաղաքականության ազդեցության ներքո: Այս ամենով հանդերձ մենք չենք պատրաստվում շեղվել մեր հիմնական թեմայից: Այսպիսով, այս շաբաթվա թեմաներն են՝ Գյուղական զարգացման ծրագրի աշխատանքային այցը Լեռնային Ղարաբաղ, ինչպես նաեւ իրականացվող եւս մեկ փոքր ծրագիր: Հանդիպեք մարդկանց խորագրի ներքո ծանոթացեք Սեւան Վարթերեսյանի հետ, որը ստանձնել է եւս մեկ փոքր ծրագրի իրականացումը:

Գյուղական զարգացման ծրագրի այցը Ղարաբաղ



Փետրվարի 11-ին Գյուղական զարգացման ծրագրի աշխատակազմը եռօրյա աշխատանքային այց կատարեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Այցի նպատակը իրավիճակի գնահատումն էր մի շարք սահմանամերձ համայնքներում:

Լեռնային Ղարաբաղի սահմանամերձ համայնքների վերականգնումը գտնվում է Գյուղական զարգացման ծրագրի ուշադրության կենտրոնում: Չնայած նրան, որ այստեղ հանդիպող խնդիրները նման են Հայաստանի սահմանամերձ համայնքներում գոյություն ունեցող հիմնախնդիրներին, իրականացվելիք աշխատանքների ծավալը շատ ավելի մեծ է: Եթե Հայաստանի տարածքում մենք աշխատում ենք վերականգնել վերահսկման բացակայության եւ անցումային շրջանի պատճառով

շարքից դուրս եկած ենթակառուցվածքները, Ղարաբաղի սահմանամերձ համայնքներում մենք գործ ունենք պատերազմական գործողությունների արդյունքների հետ:

Չնայած նրան, որ այժմ մայրաքաղաք Ստեփանակերտը արագ զարգացող եւ աշխույժ քաղաք է հանդիսանում, գյուղական համայնքները դեռեւս մեծ չափով կրում են պատերազմի հետեւանքները: Ճանապարհը դեպի այս գյուղեր ավերվածության վառ ապացույց է հանդիսանում: Այս շրջանների վերականգնման



համար մեծ աշխատանք է կատարվել Հայաստանի եւ Ղարաբաղի կառավարությունների, ինչպես նաեւ «Հայաստան» համահայկական հիմնադրամ եւ այլ կազմակերպությունների կողմից, սակայն պատերազմի հետքերը հեշտ չէ վերացնել եւ դեռեւս մեծ աշխատանք պետք է իրականացվի Ղարաբաղի բնակչությանը կյանքի նորմալ պայմաններ ապահովելու համար:



Մեր ճանապարհորդության ընթացքում այցելեցինք Ղարաբաղի Մարտակերտի շրջան: Տնտեսական զարգացումը եւ շուկաների հասանելիությունը այս համայնքների համար լուրջ խնդիրներ են հանդիսանում, քանի որ այս համայնքները դրսի հետ կապող ճանապարհները համարյա թե գոյություն չունեն: Ձմռան ընթացքում այս համայնքները ամբողջովին կտրված են մնացած աշխարհից, իսկ բնակիչները կարող են միայն հուսալ որ ձմեռը շատ երկար չի տևի:

Մոխրաթաղ համայնքում մենք անձնական փորձով հասկացանք, թե ինչ է նշանակում հասնել մի վայր, որտեղ չկան ճանապարհներ: Մեր ավտոմեքենան փորձում էր բարձրանալ գառիթափ բլուրը: Սա զբոսաշրջիկների արկածախնդիր ճանապարհորդությունն էր,

մենք ուղղակի ցանկանում էինք հասնել համայնքի գյուղապետարան: Մոտ կես ժամ ավտոմեքենան սահում էր ձյունի վրա՝ չկարողանալով առաջ շարժվել: Միայն համայնքի բնակիչների խորհուրդների եւ մեր վարորդի ջանքերի շնորհիվ վերջապես կարողացանք հասնել մեր նպատակակետին, (այս [հասցեում](#) տեղակայված է այս դեպքի մի փոքր դրվագ): Մեզ հետ սա պատահեց մեկ անգամ, այն դեպքում երբ սա հանդիսանում է տեղի բնակիչների ամենօրյա կյանքի անբաժանելի մասը:

Այս ճանապարհորդությունից հետո այն ինչ մնում է մեզ հետ, դա հարգանքն է այն գյուղացիների հանդեպ, որոնք բնակվում են այստեղ՝ փորձելով իրենց կյանքը կերտել այս համայնքներում: Չրկված լինելով մեզ համար սովորական հանդիսացող կյանքի հիմնական պայմաններից, այս մարդիկ վճռական են տրամադրված շարժվելու դեպի առաջ: Նրանց հոգին անկոտրուն է, նրանք մեծ հույսեր են կապում իրենց եւ իրենց երեխաների ապագայի հետ: Մեր խնդիրն է ամեն ինչ անել իրենց հույսերը իրականություն դարձնելու ուղղությամբ:

Կյանքի է կոչվում մեկ այլ փոքր ծրագիր

«Հայաստան» համահայկական հիմնադրամի փոքր ծրագրերի մեկնարկը մեծ ոգեւորություն է առաջացրել աշխարհի տարբեր հատվածներում բնակվող հայրենակիցների շրջանում: Այս ոգեւորությունը նյութականացվեց տարբեր ծրագրերի կյանքի կոչմամբ: Իրականացվող վերջին ծրագրի շնորհիվ Լոռու մարզի Ձյունաշող գյուղի համայնքային գրադարանը կստանա մեկ համակարգիչ եւ տպիչ: Այս ծրագիրը իրականացվեց ԱՄՆ-ի բնակիչ պրն. Սեւան Վարդերեսյանի



շնորհիվ: Գումարի փոխանցումից հետո մենք կարողացանք գնել համապատասխան սարքավորումները, իսկ հաջորդ շաբաթվա սկզբին նրանք կտեղափոխենք սահմանամերձ համայնք:

Ձյունաշող համայնքի բնակիչները այս լուրն ընդունեցին մեծ խանդավառությամբ: Համայնքը նույնիսկ որոշում կայացրեց սեփական միջոցներով վերանորոգել համայնքային գրադարանի շենքը: Այսպիսի վայրում, որտեղ կան բազմաթիվ չլուծված խնդիրներ այսպիսի որոշման կայացումը շատ կարելու է եւ ապացուցում է համայնքներում այսպիսի ծրագրերի իրականացման կարելուությունը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի եւ «Հայ Դպրոց» հիմնադրամի կողմից իրականացվող համատեղ ծրագրի շրջանակներում Ձյունաշող համայնքի դպրոցը նույնպես կստանա նոր կահույք:

Հանդիպեք մարդկանց՝ Սեւան Վարթերեսյան



Այս շաբաթ մեր ուշադրության կենտրոնում է Սեւան Վարթերեսյանը, որի շնորհիվ իրականացվեց Ձյունաշող գյուղի համայնքային գրադարանի համար համակարգչի եւ տպիչի գնման փոքր ծրագիրը: Պարոն Վարթերեսյանը եւ իր կին տիկին Միգանուշը մեր շաբաթական զեկույցների միջոցով հետեւում էին Գյուղական զարգացման ծրագրի գործունեությանը: Պարոն Վարթերեսյանը մեզ տված հարցազրույցի ընթացքում ասաց հետեւյալը՝

«Ես եւ իմ կինը շատ ուրախ ենք օգնել այս նախաձեռնության իրականացմանը: Եթե հայ մարդը ծանոթ է իր երկրի ժողովրդի դժվարություններին, պետք է շատ սառնասիրտ լինել չօգնելու համար: Ձեր զեկույցները շատ օգտակար են մեր երկրում տիրող իրավիճակին ծանոթանալու համար:

Ձեր առաջարկած երեք ծրագրերից համակարգչի գնումն առավել գրավիչ էր, քանի որ այն տեղեկատվական եւ կրթական նշանակություն ունեցող մի ծրագիր է, որը օգտակար է հատկապես երեխաների համար: Հուսով եմ, որ շուտով համայնքը կունենա նաեւ ինտերնետ կապ աշխարհի հետ ավելի հեշտությամբ հաղորդակցվելու համար:

Իսկ ինչու՞ ընտրեցինք Ձյունաշող համայնքը: Քանի որ մենք չենք եղել այս համայնքներից ոչ մեկում, գյուղը ընտրեցինք իր գեղեցիկ եւ յուրահատուկ անվան պատճառով: Հուսով ենք, որ մեր այս նախաձեռնությունը կօգնի համայնքի երեխաներին զարգացնել իրենց գիտելիքները, ապագայում դառնալով հաջողակ մարդիկ, իրենց հերթին օգնելով ուրիշներին»: